



**ՄՏԵՓՈՆԱՎԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ**

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF STEPANAVAN

Հասցե՝ **ՀՀ Լոռու մարզ, ք. Մանթիշենի, Երկաթուղային 47**
Հեռ.՝ (+374) **98253169**
Էլ. փոստ՝ **info_stepanavan@armenvm.am, marya_lara@ymail.com**

N002-25
25.03.2015թ.

ՀՀ բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին

Հարգելի պարոն Նախարար,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածները՝ խնդրում եմ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրել հետևյալի մասին՝

1. Արդյո՞ք իր գործունեության ընթացքում "Սագամար" ընկերությունն իրականացրել է Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայրի շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Եթե այո, ապա քանի՞ նախագծի համար է ՇՄԱԳ իրականացվել (հանքավայրի շահագործման նախագիծ, հանքավայրի ըլղլայնման նախագիծ և այլն):

2. Արդյո՞ք "Սագամար" ՓԲԸ-ն՝ Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքը, վերջին 10 տարիների ընթացքում, շահագործվել է փորձաքննության եզրակացության պահանջներին համապատասխան:

3. Եթե՞ ոչ, ապա ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի շահագործման էկոլոգիական փորձաքննության բոլոր նախագծերի վերաբերյալ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունների պատճենները:

Կանխավ շնորհակալություն:

Արմանիսի շահագրգիռ հասարակության անունից և խնդրանքով,
Հարգանքնով՝
Ստեփանավանի Օրիուս կենտրոնի համակարգող

Մանյա Մելիքջանյան